բըռտին եւ վերտին եկաւ կուսակալութեան պաշտօնով եւ կռիւներ մղեց Վրաստանի սահմաններում Ծանարքի դէմ, ինչպէս Իսահակ ամիրայի: Սրա վրայ էր գնում, երբ ճանապարհին մեռաւ Ջաւախքի Ոտզարքը գիւղում 844 թուին, որ այժմ էլ կանգուն գիւղ է: Ոսկիից յետոյ կուսակալ եկաւ իր որդին՝ Մուհամմետ: Սրա օրով է որ հրապարակ է գալիս Բագրատը, նոյնպէս կիւրապաղատ կոչումով:

Բագարատ առաւ կնութեան Սմբատ Աբլաբասի դուստրը: Քաղաքական ասպարէզում որդեդրեց մի ուղեգիծ, որ յար եւ նման էր Սմբատի վարուելակերպին: Ի՞նչ դերք էր բըռնել նա Բիւզանդիայի հանդէպ, յայտնի չէ: Բայց արաբների նկատմամբ նրա քաղաքականութիւնը որոշ էր: Առանց վարանելու Բագրատ յարեց ոստիկան Մուհամմետ Շայբանիին, երբ նա կուռւմ էր Թիւլիսի ըմբռստ ամիրայի դէմ: Արաբների ձեռքով իսկ կործանել վտանգաւոր հակառակորդին՝ պարզ հաշիւ էր:

Նոյն գործելակերպին հաւատարիմ մնաց եւ Բուղայի արշաւանքի ժամանակ: Տարօնը եւ Վասպուրականը պատժելուց յետոյ, տեսանք, որ Բուղան գնաց Թիւլիսի Իսահակ Շուաբի վրայ, եւ բռնեց եւ սպանեց ամիրային: Ախխազաց թագաւորը Թեւդասը փորձեց պաշտպանել Իսահակին: Բուղան նրա դէմ դրկեց ուրիշ ոյժերի հետ նաեւ Բագրատ Կիւրապաղատին: Զնայելով որ Թեւդասը Բագրատի քեռայրն էր, բայց եւ այնպէս Կիւրապաղատը եկաւ նրա դէմ կռուելու: Իսկ երբ Բուղան բանակը չարժեց դէպի լեռնականները, Բագրատն իր եղբօր Գուրամի միջոցով, ինչպէս եւ Սմբատ Ոսոտովանողը կամ Աբլաբասը, դգուշացրին նրանց, որ արաբ զօրքերը ներս չթողնեն: Լեռնականները ճանապարհները կտրեցին եւ արաբ բանակը ստիպուեց յետ քաշուել խոստովանելով իր անյաջողութիւնը: Բուղայի ձեռքով Իսահակին կործանելուց յետոյ, հերթական հարցն էր ազատուել Բուղայի ճիրաններից: Լեռնականների դէմ ունեցած ձախորդութիւնը կոտրեց Թիւրք զօրավարի վարկը եւ յետ կանչուեց: Նրա տեղը եկաւ նոյն Մուհամմետ Շայբանին յուզուած երկիրը անդորրացնելու:

Բագրատունեաց քաղաքական ծրագիրների տեսակէտից Թիւլիսի ամիրայի անկումը վճռական նշանակութիւն ունէր: Շուաբի տունը վտանգաւոր էր ոչ միայն Վրաստանին, այլ եւ Հայաստանի բարգաւաճման արգելաւոք: Չէր կարելի վստահել, որ մի օր իրական տէր չէր դառնալ երկու երկիրներին էլ: Թւում է, որ նա զուրկ չէր ընդարձակ համակրութիւնից. Իսահակի կինը քրիստոնեայ դչխուհի էր, նրա զօրքերի մէջ կար խոյթեցիների կամ ասսունցիներից կազմուած յատուկ գունդ. (Տաբարի, Գ. 1416, Մարկուարտ, Streitzuge, 460):

Անուրանալի է, որ Շուաբի տունը բարեբեր եղաւ այն մտքով, որ կենդրոնական իշխանութեան ուշադրութիւնը իր վրայ առնելով, յարմարութիւն տուաւ Բագրատունիներին հաստատուն ոտ դնել կղարջք, յենուելով բնաղանդական պատուարին: Սակայն, ձորոխի հովտից յառաջանալ դէպի Վրաստան եւ գրաւել բուն վրական հողերը անկարելի էր Բագրատունիների համար, քանի որ Թիւլիսում բուն էր դրել Շուաբի տունը: Ճշմարիտ է Մարկուարտի կարծիքը, որ Բագրատունիները միմիայն կղարջքի իշխաններ էին եւ Վրաստանի հետ կապ չունէին որչափ ատեն որ Թիւլիսի մէջ նստած էին Շուաբի բռնաւորները:

Սրանց անկումից յետոյ Վրաստանը դառնում է կռուախնճոյր հայ Բագրատունիների եւ Ախխազի տէրերի մէջ: Բուղայի հեռանալով, Հայաստանի իշխանութիւնը ստանձնեց Սմբատ Ոսոտովանողի որդին Աշոտ, որ 862 թ. եղաւ իշխանաց իշխան եւ 886-ին թագաւոր:

Վերեւ տեսանք, որ Աշոտը իշխանաց իշխան նշանակուելուց յետոյ ձեռնամուխ եղաւ նուաճելու եւ հնազանդեցնելու «զիշխանս հայոց, զվրաց եւ զաղուանից»: Պատմագիրն ասում է՝ «որ եղեւ խակ»: Պէտք է կարծել, ուրեմն, որ Աշոտի գերիշխանութեան տակ էր նաեւ Արտանուջի իշխան Բագարատ Կիւրապաղատը: Արդեօք սա եւս գերուե՞ց Բուղայի կողմից նման Սմբատ Ոսոտովանողի, եւ յետոյ դարձաւ, յայտնի չէ: Վրաց Տարեգիրքը նրա մահը դնում է 876 թ. Բագարատը Աշոտի կողմնակիցն էր, երբ վերջինս պատերազմի բռնուեց Ախխազաց Գիորգի Ա. թագաւորի հետ Վրաստանի պատճառով: Բագարատի եղբայրը Գուրամ իր որդի Նասրա (=Ներսեհի) հետ Ախխազաց համակիր էր, մինչդեռ Բագ-